Միսաք Մեծարենց

Նոպաները

Մթության մեջ վրհուկի մը պես թախծադեմ,
ցավոտ Սիրո հարվածն է որ կ'իջնե կուրծքիս.
ու Տենչանքի ծիրանիեն հրաշեկ հոգիս
դեռ կ'ընդգրկե հիշատակներ՝ զորրս կ'ատեմ:

Բոլոր լույսերն ալ մարեցան հետրզհետե.
ես կը սիրեմ այս խավարը տառապագին,
ուր վիշտ մը լայն՝ սիրտրս կուրծքես դուրս կը նետե,
և ես կ'ըմպեմ սև հեշտանքը ցավոտ Կյանքին:

Խավարին մեջ չունիմ խարխափն երազանքին,
ու կը դադրիմ սերերու շուրջ թափառելեն.
բոցեղ աչքերս ունին կայծակ մը թախծագին,
սիրտես ցավերն հեծքեր վայրագ լոկ կը խլլեն: